ՀՏԴ 37.01:821.19

Գրականության դասավանդման մեթոդիկա

Նոնա ԴԱՎԹՅԱՆ
ԱրՊՀ գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնի ավագ դասախոս, բ. գ. թ.

Կ. ԶԱՐՅԱՆԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ «ՆԱՎԸ ԼԵՌԱՆ ՎՐԱ» ՎԵՊԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑՈՒՄ

Ուսումնամեթոդական սույն հոդվածում անդրադառնում ենք հանրակրթական ավագ դպրոցում հայ գրականության դասավանդման առանձնահատկություններին, ներկայացնում 12-րդ դասարանի դասագրքում տեղ գտած թեմաներից Կ. Զարյանի կյանքի և ստեղծագործությունների ուսուցման մեր նմուշօրինակը:

Բանալի բառեր՝ կրթական ծրագիր, առարկայական չափորոշիչ, դասագիրք, ավագ դպրոց, գրականության դասաժամ, մեթոդներ, կարճ դասախոսություն, կենսագրական «քարտեզ»:

Н.Давтян

ПРЕПОДАВАНИЕ БИОГРАФИИ К. ЗАРЯНА И РОМАНА "КОРАБЛЬ НА ГОРЕ" В СТАРШЕЙ ОБЩЕОБРАЗОВАТЕЛЬНОЙ ШКОЛЕ

В данной учебно-методической статье мы обращаемся к особенностям преподавания армянской литературы в старшей школе, приводим образец изучения биографии и творчества К. Заряна – темы, представленной в учебнике 12-го класса.

Ключевые слова: образовательная программа, предметный стандарт, учебник, старшая школа, урок литературы, методы, краткая лекция, биографическая «карта».

N.Davtyan

TEACHING THE BIOGRAPHY OF K.ZARYAN AND THE NOVEL "SHIP ON THE MOUNTAIN" IN THE COMPREHENSIVE HIGH SCHOOL

In this educational and methodological article, we turn to the peculiarities of teaching Armenian literature in high school; we give a sample of studying the biography and creativity of K. Zaryan - a topic presented in the textbook of the 12th grade.

Key words: educational program, subject standard, textbook, high school, literature lesson, methods, short lecture, biographical "map".

Ավագ դպրոցում հայ գրականության առարկայի դասավանդման նպատակը ծրագրային երկերի խորքային ուսումնասիրությունն է: Ուսուցիչը

համակարգված գիտելիքներ է հաղորդում հայ գրողների կյանքի և ստեղծագործական ընթացքների վերաբերյալ, իսկ աշակերտը պետք է կարողանա գրական երկերը ընկալել, վերլուծել, թափանցել իմաստի խորքը, կարողանա հասկանալ հոգեբանական այն անցումները, որոնք պարտադրում են գրական հերոսի արարքների ընթացքը (կարևոր է գրողին տեսնել իր ապրած ժամանակաշրջանի տարածության մեջ):

Յուրաքանչյուր ուսուցիչ ձեռքի տակ պետք է ունենա՝ կրթական ծրագիրը և առարկայական չափորոշիչը, ուսուցչի ձեռնարկը, դասագիրքը, բնագրեր և վերլուծականներ:

Հանրակրթական ավագ դպրոցի հումանիտար հոսքի ծրագրով Կոստան Զարյան գրողի կյանքն ու գրական ընթացքները, ստեղծագործությունները ուսումնասիրվում են 12-րդ դասարանի առաջին կիսամյակում, թեմային տրվում է 8 դասաժամ: Ըստ կրթակարգի ուսուցման նպատակը սփյուռքահայ գրողի գրականությունը կարդալու և հասկանալու կարողության ձևավորումը և գրականության լեզվառճական առանձնահատկությունների իմացությունն է:

Առաջին դասաժամը, սովորաբար, հատկացնում ենք գրողի կենսագրության ուսուցմանը: Երկրորդ դասաժամին անդրադառնում ենք գրողի ստեղծագործություններին, առանձնացնում գրողին որպես բանաստեղծի և ուսումնասիրում «Երեք երգը…», «Օրերի պսակը» բանաստեղծական շարքերը: Երրորդ դասաժամը հատկացնում ենք «Տատրագոմի հարսը» պոեմի ուսուցմանը, նախապես հանձնարարում կարդալ բնագիրը կամ այն հատվածները, որոնք ըստ ուսուցչի գաղափարագեղագիտական շեշտադրումներով առանձնացվող հատվածներ են: Չորրորդ դասաժամին անդրադարձ է կատարվում արձակ ստեղծագործությունների ընդհանուր բնութագրին, հինգերորդ դասաժամին՝ «Նավը լեռան վրա» վեպի բովանդակային ուսուցմանին: Վեցերորդ և յոթերորդ դասաժամերը հատկացնում ենք վեպի գաղափարական հարցադրումների և կերպարների ուսուցմանը, ութերորդ դասաժամը կատարում ենք թեմայի ամփոփում:

Յուրաքանչյուր գրական ստեղծագործություն ամբողջությամբ ընկալելու համար նախ և առաջ պետք է ուսումնասիրել գրողի կյանքն ու պատմական այն ժամանակաշրջանը, որում նա ապրել է: Գրողը երբեք օտարված չէ իր ստեղծագործությունից, ուստի նկատելի թե աննկատ կերպով ներկա է իր ստեղծագործությունների մեջ: Դա նրա և՛ իրական, և՛ երևակայական կյանքն է:

Գրողի կենսագրության ուսուցումը համատեղում է մի քանի կողմեր՝

ա) կենսագրական փաստեր,

բ) գրական-հասարակական գործունեություն,

գ) գրողը որպես իր ժողովրդի հոգեբանության կրող:

Գրողի մասին մեր պատկերացումները սկսվում են նրա անձը ճանաչելուց: Հաճախ է լինում, երբ գրողի կենսագրության շուրջ արտադասագրքային զրույցները գրողին ու նրա ստեղծագործությունները ճանաչելու հետաքրքրություն են առաջացնում աշակերտի մոտ: Ուսուցչից պահանջվում է

նուրբ և հետևողական մոտեցում գրողի կենսագրական այս կամ այն փաստի մատուցման ժամանակ, ասել է թե՝ երբեք գրողին չիջեցնել իր պատվանդանից, պահել նրան բարձրության վրա:

Երբ ուսուցիչը գրողի կենսագրությունը ներկայացնում է բանավոր, հաճախ աշակերտները չեն ներգրավվում դասի ընթացքին: Այս տեսակետից ուսուցչի առջև մեծ խնդիր է դրվում՝ թեմայի նկատմամբ առաջացնել հետաքրքրություն և դրդել լսելու և սովորելու այն: Սրան մեծապես օգնում է գրողի մասին հետաքրքիր դրվագներ պատմելը. խորագիտակ ուսուցիչն իր թղթապանակում կամ էլեկտրոնային պահոցում, անշուշտ, կունենա անհրաժեշտ բոլոր նյութերը՝ համացանցից գրողի կյանքն արժևորող հաղորդումների տեսադարաններ, էկրանավորված ֆիլմեր, խոսող գրքեր, գրողի նամականին և այլն: «Կ. Զարյանի կենսագրությունը» թեման ուսումնասիրելու ժամանակ ուսուցիչը կարող է իր խոսքին զուգահեռ աշակերտներին ցուցադրել գրողի մասին «Հայկ» կինոստուդիայի կողմից նկարահանված «Հայ գրականության մենակը...» ֆիլմը (սցենարի հեղինակ՝ Նաիրա Եղիազարյան, ռեժիսոր՝ Հայկ Կբեյան) կամ «Մեր մեծերը» հեռուստաշարի կարճամետրաժ ֆիլմը՝ նվիրված դարձյալ գրողի կյանքին և ապրած ժամանակաշրջանին: Տեղեկատվական տեխնոլոգիաների դարաշրջանում ապրող աշակերտին հետաքրքրում են ցուցադրական դասերը: Եվ նորարար ուսուցիչը, շահագրգռող մոտիվացիա առաջացնելու նպատակով, պետք է ձեռքի տակ ունենա համապատասխան ցուցադրական նյութեր, ստեղծի նաև ինքը՝ հետևելով իմաստախոսությանը «Ասա՛, պատմի՛ր, և նա (աշակերտը) կհիշի հիսուն տոկոսով, ցույց տո՛ւր, և նա կհիշի յոթանասուն տոկոսով, իսկ երբ աշակերտն է ստեղծում գիտելիքը, հիշում և մտապահում է իր ամբողջ կյանքում»: Պետք է միշտ կարևորել նաև այն միտքը, որ այսօրվա կիրառած տեխնոլոգիան վաղը հնացած և անհետաքրքիր է լինելու աշակերտի համար, ուստի պրպտող, ստեղծագործաբար իր աշխատանքին մոտեցող ուսուցիչը միշտ կունենա թեմայի մատուցման ինքնօրինակություն:

Ուսուցչի առաջին նվաճումը դասի ճիշտ սկիզբը կամ ներածությունն է, որի ժամանակ ուսուցիչը պետք է՝

ա/ գրավի աշակերտի ուշադրությունը, հետաքրքրությունը և ապահովի մասնակցությունը,

բ/ կապի հաղորդվելիք ուսումնական նյութը սովորողների ունեցած փորձի հետ,

գ/ սահմանի դասի վերջնարդյունքը,

դ/ հնարավորինս բարձրացնի սովորողի շահագրգռվածությունը:

Պետք է հիշել, որ ճիշտ կազմված ներածությունը կոտրում է «սառույցը»՝ դասի սկզբում նկատելի դժկամությունը, դյուրին է դարձնում սովորելու գործընթացը, բարձրացնում է սովորողների սովորելու դրդապատճառը:

Արդյունավետ, նպատակային դասի համար յուրաքանչյուր ուսուցիչ նախապես պետք է պլանավորի իր դասը, ունենա դասի ընթացքի

նկարագրության պլան-սեղմագիրը: Ուսուցչի մասնագիտական ամենակարևոր որակներից մեկը, կարելի է ասել, դասը ճիշտ պլանավորելն է: Հստակ գիտակցելով դասի խնդիրներն ու նպատակները և ճիշտ պլանավորելով՝ ուսուցիչը կարող է մեծապես նպաստել ուսուցման արդյունավետության բարձրացմանը: Դասն արդյունավետ կլինի, եթե պլանավորելուց առաջ հստակ տրվեն «Ի՞նչ սովորեցնել», «Ինչո՞ւ սովորեցնել», «Ինչպե՞ս սովորեցնել» հարցերի պատասխանները: Կարևոր է նաև հստակ հասկանալ, թե ինչ չափով են դասի նպատակները բխում կրթական չափորոշչից :

Ստորև տանք Կ. Զարյանի կենսագրության ուսուցման պլան-սեղմագրի նմուշ-օրինակ.

Դասի պլան

ԽԻԿ համակարգ
Ուսուցիչ-
Ամսաթիվ-
Դասարան-12-րդ
Դասի թեման- Կ. Զարյանի կենսագրությունը
Դասատիպը- նոր նյութի հաղորդման դաս

Դասի կահավորումը- գրողի դիմանկարը, ցուցապաստառ՝ գրողի մասին ժամանակակիցների գնահատականները, շնորհանդես՝ «Կ. Զարյանի՝ հայի ոգու որոնման բանաձևը» խորագրով, պրոյեկտոր՝ ցուցադրելու «Հայկ» կինոստուդիայի «Հայ գրականության մենակը» ֆիլմը:

Դասի նպատակները.

1) Ներկայացնել գրողի ապրած ժամանակաշրջանը, կենսագրությունը, ստեղծագործական նախափորձերը, գրական ժառանգության ընդհանուր պատկերը:
2) Գրական ստեղծագործությունը գնահատելու, կերպարները վերլուծելու, երկի կառուցվածքը, գաղափարական ու գեղարվեստական արժանիքները բացահայտելու կարողությունների մշակում և ամրապնդում:
3) Շարադրանքներ, ռեֆերատներ, փոխադրություններ գրելու, քննարկումներ կազմակերպելու և դրանք անցկացնելու կարողությունների մշակում, ինքնուրույն ստեղծագործական աշխատանք կատարելու կարողության կատարելագործում[1]:

Դասի ընթացքը.

Խթանման փուլ

«Մտագրոհ» մեթոդական հնարով պարզել, թե ինչ գիտեն աշակերտները «Սփյուռքահայ գրականություն» ասելով, երբ ընդհատվեց արևմտահայ

---

[1] *Դասի նպատակի ձևակերպումն, անշուշտ, պետք է համահունչ լինի հանրակրթական չափորոշչի պահանջներին:*

գրականության ընթացքը, որ թվականը կարելի է համարել սփյուռքահայ գրականության ձևավորման տարեթիվը, թվարկել անցյալ դարում Սփյուռքում ապրող գրողների անուններ, պարզել, թե ինչ գիտեն Կ. Զարյանի մասին և այլն:

«Կարճ դասախոսություն» խոսքային մեթոդով ներկայացնել լսարանին, թե ինչու այսօր գրաքննադատությունը հեղինակի անունը Սփյուռքահայ գրողների շարքում է տեսնում, այն դեպքում, երբ Զարյանը ծնունդով ներկայիս Ադրբեջանի Շամախի գավառական քաղաքից էր[1], ծնվել է ցարական բանակի գեներալ Քրիստափոր Եղիազարյանի ընտանիքում: Ներկայացնել նաև գրողի ապրած ժամանակաշրջանը, որը լի է ողբերգություններով, կորուստներով ու գտնումներով:

Իմաստի ընկալման փուլ

Ներկայացնել գրողի կենսագրությունը՝ մանկության օրերից մինչև հասունացման տարիներ, եղբոր ջանքերով Ֆրանսիա տեղափոխվելու պատճառները, Անիերի գիշերօթիկում սովորելու տարիները, առաջին գրչափորձերը ֆրանսերեն լեզվով, որոնք արժանանում են Է. Վերհարնի ուշադրությանը ու գնահատանքին: Օտարագիր Զարյանին դեպի ազգային ավազան շրջելու մեջ թերևս մեծ է Վերհարնի դերը. հետագայում այդ մասին պատմում է Կ. Զարյանը: Խոսում էին գրողի, ճշմարիտ բանաստեղծության մասին: Վերհարնը հարց է տալիս.

«-Չգիտեմ, դուք հավատացյա՞լ եք, թե՞ ոչ,- ասաց նա,- բայց եթե լինեիք, ի՞նչ լեզվով պիտի աղոթեիք:

-Մանուկ հասակիս մայրս ինձ սովորեցրել էր «Հայր մերը» գրաբար:

-Հայերե՞ն:

-Հին հայերեն, այո:

-Ուրեմն ի՞նչ է բանաստեղծությունը, եթե ոչ մշտատև աղոթք»:

Եվ օտարագիր Զարյանը հասկանում է, որ «Հայ ոգին» կարելի է արտահայտել միայն հայերենով, մեկնում է Վենետիկ՝ Մխիթարյան այրերի մոտ սովորելու մայրենի լեզուն[2]:

Ուսուցչի խոսքին զուգահեռ պետք է ցուցադրել նաև «Հայկ» կինոստուդիայի նկարահանած «Հայ գրականության մենակը» ֆիլմից հատվածներ:

Ակնարկային տարբերակով ներկայացնել գրողի ստեղծագործական ճանապարհը՝ առանձին ստեղծագործությունների խորքային ուսուցումը թողնելով հաջորդ դասաժամերին:

---

[1] Անշուշտ աշակերտը գիտի, որ Շամախի գավառական քաղաքում է ծնվել նաև Ալ. Շիրվանզադեն, որպես լրացուցիչ տեղեկություն նշել, որ Շիրվանզադեի, Կ. Զարյանի և հայտնի դերասան Հովհ. Աբելյանի մայրական տատերը քույրեր էին:

*[2] Տե՛ս **Զարյան Կ.**, Նավատոմար, «Մարգիս Խաչենց» հրատ., Եր. 1999, էջ 587 :*

Կշռադատման փուլ

Կշռադատման փուլում անդրադառնալ «Ժամանակակիցները Կ. Զարյանի մասին» ցուցապաստառին և «Կ. Զարյանի՝ հայի ոգու որոնման բանաձևը» շնորհանդեսին (սլայդ): Հանձնարարել հնչած առանձին մտքեր գրել գրականության տետրում:

Օրինակ՝

- *«Լեզուն արյուն է՝ խառնված հոգիով պեղված հողերին: Լեզուն արյուն է, արդ՝ արյունը չի կարելի փոխել: Լեզուն ոգի է, այդ ոգին չի կարելի աղավաղել: Դրանք տարրական ճշմարտություններ են: Կարելի՞ է ռոկոկո ոճով եկեղեցի շինել: Կարելի չէ, և հայը չի մտնի, այնտեղ չի աղոթի: Իսկ նրանք, ովքեր ուզում են օտարանալ, բարի ճանապարհ, թող օտարանան: Արդեն հայությունը քանակ չէ, այլ որակ է»:*
- *«Այն բոլոր ազգերը միայն պիտի կարողանան ապրել, գալիք սարսափելի դեպքերի միջոցին, որոնք ինքնուրույն և ուժեղ մշակույթ ունեն, որոնք մարդկության համար անհրաժեշտ տարր են կազմում, որոնք կարող են իշխել իրենց մտքի և հոգու զորությամբ»:*

Քննարկման համար ընտրել «Հայության կոչումը» էսսեից հետևյալ հատվածը. *«Արդ՝ հարց է ծագում. մենք՝ հայերս, կանգնած երկու այդ հսկա աշխարհների՝ մշակութային Արևելքի և քաղաքակրթական Արևմուտքի միջև՝ ի՞նչ կերպով պիտի կարողանանք իրագործել մեր պատմական ճակատագիրը:*

*Պիտի կառչե՞նք մեռնող եվրոպական քաղաքակրթության, թե առաջին պլանի վրա կանգնած՝ արևելյան մտքի նոր ճառագայթումի և նոր ստեղծագործական թափին հետ, պիտի հանդիսանանք ներուժ մշակութային կենդրոն: Պիտի կրկնե՞նք մեր նախնիքների սխալը, թե գիտակցորեն, հերոսաբար, պիտի կարողանանք՝ հակառակ մեզ շրջապատող անողոք պայմաններին՝ դրսևորել մեր ազգային **էսը,** ընդունել պատմությունից մեզ վիճակված խորհրդավոր, հակատրամաբանական ճակատագրական դերը:*

Քաջություն ունենանք խորհելու և նաև քաջություն ունենանք համարձակելու»[1]*:*

Ընտրված հատվածը բանավիճային քննարկումների պատճառ կդառնա (բանավեճը խոսքային մեթոդներից է. այն աշակերտի մոտ ձևավորում է քննական և քննադատական հայացք): Կարելի է քննարկել նաև «Նավատոմար»-ի էսսեներում հեղինակի խոհերը հայի լինելության, ինքնության որոնման, «Արարատյան մարդու» խորհրդի շուրջ, կատարել վերլուծություններ, հետևություններ:

Որպես տնային առաջադրանք հանձնարարել վերնագիր ընտրելով գրողի տողը՝ «Լեզուն արյուն է», «Հայության դժբախտությունը», «Հայության կոչումը», գրել ստեղծագործական շարադրություն:

---

[1] ***Զարյան Կ.,*** *Նավատոմար, «Սարգիս Խաչենց» հրատ., Եր. 1999, էջ 224:*

Դասի վերջին րոպեներին հարցերի միջոցով ստուգել, թե որքանով է յուրացվել դասը, ամփոփել, հանձնարարել սովորել և գրականության տետրում կազմել գրողի կենսագրական տվյալների «քարտեզ»:

«Նավը լեռան վրա» վեպի ուսուցման ժամանակ աշակերտներին անշուշտ հետաքրքիր կլինի պատմել «Ասպարեզ» օրաթերթում գրաքննադատ Վարդան Մաթևոսյանի «Առաջին Հանրապետութեան նաւերը և Կոստան Զարեանի «Նաւը լերան վրայ» վէպը» հոդվածը[1]: Կհետաքրքրի նաև այն փաստը, որ «Այաս» ծովային հետազոտությունների ակումբի ջրասուզակների խումբը Սևանա լճի հատակին նավի կմախք է հայտնաբերել, որն ուներ մոտ 27-30 մետր երկարություն, 6 մետր լայնություն և նույնքան էլ բարձրություն: Նավի իրանը տարիների ընթացքում քայքայվել ու կոտրվել էր, բայց ջրասուզակները, որ հրաշալի գիտեին Սևանում եղած նավերի պատմությունը, անմիջապես կռահում են, թե որ նավն է ավազախրվել հաստ շերտի մեջ: Լճի հատակին անշարժացել էր հանրահայտ «Գեղանուշը»: Նավը ռազմական նպատակներով էր բերվել Հայաստան:

Առաջին հանրապետության վարչապետ Սիմոն Վրացյանն իր հուշերում գրում է, որ նավը երկար ժամանակ մնացել էր Շահթախթ կայարանում: Նավի մասին վերհիշում են միայն 1920 թվականին: Հենց նույն թվականի սեպտեմբերին, ինչպես վկայում են ժամանակակիցները, վերջապես իրականացվում է նավի տեղափոխումը Շարուրից Երևան, իսկ այնտեղից էլ Ելենովկա (Սևան): Վավերագրերում պահպանվել են այդ առաքելությունն իրականացնողների անունները՝ սպա Թումանյան, Հայաստանի խորհրդարանի անդամ Տիգրան Ծամուր (հենց նա էլ նավը վերանվանում է «Գեղանուշ»), ծովակալության սպաներ Գարագաշյան, Հերյան: Վերջիններիս մեծապես աջակցել էր տրապիզոնցի Երվանդ Գասպարյանը՝ հայ մեծահարուստ Ալեքսանդր Մանթաշյանի «Բորժոմ» նավթատար նավի նախկին նավապետը, ով հետո եկել էր Հայաստան և դարձել Սևանա լճում աշխատող «Աշոտ Երկաթ» անունով փոքր ռազմանավի նավապետը: Եվ այս իմաստով Զարյանի վեպը որոշ առումով ձեռք է բերում փաստագրական բնույթ[2]:

Գրականության ուսուցումը պետք է նպաստի ոչ միայն դաստիարակչական, ճանաչողական նշանակության գիտակցմանը, այլև հայ գրականությունը որպես հայ ժողովրդի պատմական ճակատագրի և հայ մարդու կերպարի մարմնավորման ընկալմանն ու ավանդույթների շարունակականությանը, նաև

---

[1] *Տե՛ս՝ «Ասպարէզ» օրաթերթ, 26 մայիս, 2018, էջ 23: Նաև՝ https://asbarez.am/316024/%D4%B1%D5%BC%D5%A1%D5%BB%D5%AB%D5%B6-*

[2] *Վեպի 2015թ. վերահրատարակության «Ծանոթագրություններ»-ում տրվում է վեպի դիպաշարի իրական նախապատմությունը (Տե՛ս **Զարյան Կ.,** Նաւը լերան վրայ, «Սարգիս Խաչենց» հրատ., Եր. 2015, էջ 718):*

ազգային գեղարվեստական մտածողության յուրահատկությունների բացահայտմանը[1]:

Հայ դպրոցի աշակերտը ապագայում ազգային արժեքների կրողն է լինելու: Ապագա քաղաքացու արժեհամակարգի ձևավորման գործում կարևոր է թերևս քարի, հողի, ջրի, Արարատ լեռան, մայր Արաքսի, սրբազան Արածանիի, հայոց խաչքարերի, մամռակալած վանքերի ու եկեղեցիների հանդեպ ակնածանքի, հիացումի, հպարտության զգացումների սերմանումը: Այս նպատակին պետք է ծառայեցնել հայ մեծանուն գրողների երկերի ուսուցումը, այդ թվում նաև Կ. Զարյանի ստեղծագործությունների ուսուցումը: Քարի, հողի, ջրի, լեռան և այլ խորհրդանիշներ ընկած են Կ. Զարյանի «Նավը լեռան վրա» վեպի հիմքում. վեպի հերոսը՝ Արա Հերյանը և մյուս կերպարները հետաքրքիր մտորումներ ունեն քարի, լեռան մասին. «Եթե մեզ հարց տան՝ ինչ է Հայաստանը, կպատասխանենք՝ քար: Ճշմարտությունը դա է. Հայաստանը քար է: Որտեղ ոտք դնես, քար է զրնգում: Լեռներ, ժայռեր, լեռներ, ժայռեր...: Եվ եթե մարդ համառություն չունի և չունի այն, որ անվանում ենք հայրենիքի սեր, այստեղ չի կարող ապրել... այս քարերը մենք սիրում ենք, դարեր կապվել ենք նրանց և չենք ուզում բաժանվել...»[2]:

Եվ եթե ուսուցիչը նշված տողերը կարևորում, առանձնացնում և կարդում է աշակերտներին, ապա, անշուշտ, նրանց մոտ ձևավորվում է հայրենիքի հանդեպ սերը, նրանք կսիրեն և կապված կմնան հայրենի լեռ ու քարին, կլինեն աշխատասեր, կլինեն համառ ու կամային: Վեպի հատվածների ընթերցման ժամանակ աշակերտները պետք է գրառումներ կատարեն, իրենք վեր հանեն երևույթը, բառի իմաստը, դաստիարակչական արժեքը: Կ. Զարյանի ամբողջ ստեղծագործությունը հայ ոգու փառաբանումն է, հայ մարդու և նրա հայրենիքի միասնության գաղափարի հաստատումը: Վեպից կարելի է առանձնացնել նաև «Հայերը՝ վայրի թռչունների նման կառչում են ժայռերին», «Երբ հայը լքում է լեռները՝ նսեմանում է, փոքրանում, բարոյալքվում... Դառնում է ուրիշ, դատարկվում է ինչ-որ գաղտնիքից, մի ինչ-որ խորհրդից...», «Ժողովրդի մեծությունը իր հողերի մեծությունից խոմ կախված չի, փոքրիկ հայրենիքները կարող են մեծ հրաշքներ կատարել», «Մշակույթը ոգի է և մեծ մշակույթը հատուկ է մանավանդ փոքրիկ ժողովուրդներին», «Ազգը դադարում է լինելուց և նրա տեղը բռնում է մի ինչ որ ազգանմանություն: Լեզուն վերածվում է լեզուների. Ոճը կորչում է և բառերը բռնում են իմաստների տեղը», պետք է «…վերագտնել ցեղի հոգեկան կենտրոնում վառված անմար ճրագը» և «Եթե չենք անհետացել, այդ որովհետև վտանգի ժամերին մենք վերագտել ենք մեր իսկությունը, մեր միությունը, մեր հոգեկան դեմքը»[3]: Նշված տողերում մեծ խորհուրդ կա,

---

[1] Նշենք, որ նոր մշակված և բուռն քննարկումների և տարակարծությունների տեղիք տված «Հանրակրթական դպրոցում գրականության ուսումնառության Հայեցակարգ»-ում վերոնշված նպատակները տեղ չեն գտել:

*[2] **Զարյան Կ.,** Նաւը լերան վրայ, «Սարգիս Խաչենց» հրատ., Եր. 2015, էջ 90:*

[3] Նույն տեղում, էջ 131, 190, 242, 244, 250, :

հավերժության խորհուրդը: Ուսուցիչն, անշուշտ, պետք է նշի, որ քարի համառության կրողը վեպի գլխավոր հերոս Արա Հերյանն է՝ հեռավոր ծովերի նավապետը, ով երկրի վերաշինումի, վերահառնումի գաղափար-մարմնացումն է. Արան նավը պետք է Սևան հասցնի, նավը խորհրդանիշն է հավատքի՝ Հայաստանի վաղվա հանդեպ հավատքի և հույսի խորհրդանիշը, իսկ Արան մարմնավորում է մեռնող և հառնող աստվածությունը:

Հաջորդ խորհրդանիշն Արևն է (Արևը որպես խորհրդանիշ մինչ այդ դիտարկել ենք Ավ. Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» և Ե. Չարենցի «Ամբոխները խելագարված» պոեմների ուսուցման ժամանակ): Կ. Զարյանի նշված վեպում կարդում ենք. «Մեր ժողովուրդը,- մտորում է վեպի հերոսներից Սուլթանյանը,- արևային այդ սկզբունքներից երբեք չի հեռացել… երբ մեզ պարտադրել են քրիստոնեությունը, մենք այդ կրոնը կերպարանափոխել ենք արայականի… Մեր ժողովրդի համար Հիսուսը Արև է: Հիսուսը հարություն առած Արան է: Լույս, կրակ... Մարդը պարտ է դառնալ լույս, ճառագայթ... աստվածանալ...»[1]:

Վեպի ուսուցման ընթացքում պատմական ժամանակաշրջանի վերհանման շուրջ ուսումնառողներն անշուշտ կունենան հարցեր, որոնց պատասխանները պետք է ուսուցիչն ունենա, ավելին միջառարկայական կապի պահպանման համար կարելի է հրավիրել նաև պատմության ուսուցչին: Կծավալվի հետաքրքիր քննարկում, կինչեն տարբեր տեսակետներ, ոչ մի հարց չպետք է վրիպի ուսուցչի տեսադաշտից, որովհետև հարցերը հաճախ օգնում են վերահսկելու աշակերտի մտքի ընթացքը: Կարևոր է նաև ուսուցչի կողմից հարցերի ճիշտ ձևակերպումը և հերթականությունը: Բովանդակային առումով հարցերը պետք է համապատասխանեն սովորողների տարիքային մակարդակին: Ավագ դպրոցում կարճ պատասխան ակնկալող հարցերը չեն խթանում սովորողների ակտիվ իմացական գործունեությունը: Պետք չէ տալ նաև պատրաստի պատասխաններ ենթադրող՝ հուշող հարցեր: Նախընտրելին մեկնաբանման՝ բացատրական հարցերն են, որոնք սովորաբար սկսվում են «ինչո՞ւ» բառով, որոնք արդյունավետ են պատճառահետևանքային շղթաները բացահայտելու առումով: Հարցը ճիշտ և տեղին կլինի, եթե հարցնողը ակնկալում է մտքի որոշակի անկախություն:

Կերպարների ուսուցման ժամանակ պետք է զուգադրել Արա Հերյանի և Միքայել Թումանյանի, Մարկ Պետրոսի և Սուլթանյանի կերպարները:

«Նավը լեռան վրա» վեպի ուսուցման ժամանակ պետք է կողք կողքի դնել երկու հրատարակությունները՝ բոստոնյան 1943 թվականի հրատարակությունը և երևանյան՝ 1963 թվականի հրատարակությունը՝ խորհրդային գաղափարապաշտության պարտադրած մկրատումները ցույց տալու նպատակով: Վեպի անցանկալի փոփոխությունները կատարվել են գրքի խմբագիր Հրաչյա Գրիգորյանի և Օննիկ Թոփուզյանի կողմից, իհարկե առանց հեղինակի կամքը հարցնելու և առանց հեղինակի կարծիքը հաշվի առնելու: Վեպի առաջին տարբերակում հեղինակը երկրում ստեղծված անկայունության,

[1] *Նույն տեղում, էջ 252:*

սխալների համար անողոքաբար քննադատում է դաշնակներին, ավելի սուր սլաքներով նաև ռուսներին ու բոլշևիկներին: Դաշնակներին քննադատում է ուժերը ոչ ճիշտ ժամանակին համախմբելու, կենտրոնաձիգ պետականություն ստեղծելու անզոր ձիգերի, անհեռատես գործիչների պատճառով[1], իսկ բոլշևիկներին՝ բռնությունների, սպանությունների ու աքսորի: Զարյանը քննադատում է նաև եվրոպական տերություններին, որոնք մարդասիրական կեղծ օրակարգերով մեկ մեկի դեմ էին և են լարում ժողովուրդներին: «… Տաճիկներին ու թրքերին մեր դեմ զինողները հենց դրանք են»,- վեպի հերոսների աչքով նկատում է Զարյանը: Պետք է կարևորել նաև, որ մահից առաջ արձակագիրը խնդրել էր վերատպել միայն բնօրինակը՝ բոստոնյան տարբերակը:

Գրականություն

1. **Զարյան Կ.,** Նաւը լերան վրայ, «Սարգիս Խաչենց» հրատ., Եր. 2015:
2. **Զարյան Կ.**, Նավատոմար, «Սարգիս Խաչենց» հրատ., Եր. 1999:
3. **Գասպարյան Դ., Քալանթարյան Ժ.,** Հայ գրականություն 12 (հումանիտար հոսք), Եր.2011:
4. **Եղիազարյան Ա.,** Հայ գրականություն 12 (Դասագիրք ավագ դպրոցի ընդհանուր և բնագիտական հոսքերի 12-րդ դասարանի համար), Եր. 2011:
5. **ՀՀ ԿԳՆ Կրթական ծրագրերի կենտրոն, Հայոց լեզու և գրականություն** (Հանրակրթական ավագ դպրոցի առարկայական չափորոշիչներ և ծրագրեր), Եր.2009:
6. «**Ասպարէզ**» օրաթերթ, 26 մայիս, 2018, էջ 23:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, բ.գ.դ. Ս.Ա.Խանյանը:

[1] *Թերևս նշվածները պատճառ հանդիսացան Սիմոն Վրացյանի արձագանքի. Զարյանին ուղղված նամակում իր հիացմունքի հետ վերջինս արտահայտել է նաև իր դժգոհությունները վեպում առանձին երևույթների հանդեպ գրողի ունեցած վերաբերմունքի կապակցությամբ:*